


**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒ ՈՐՊԵՍ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԿԱՊԻՏԱԼԻ
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ**

Յ. Ն. ԳԱՆՍՏՅԱՆ

Ներկայումս տնտեսության մեջ կարևորվում է ինտելեկտուալ կապիտալի՝ որպես տնտեսական զարգացման յուրահատուկ գործոնի դերը: Չարգացած երկրներում աշխատանքային ռեսուրսներին ներկայացվում են բավականաչափ բարձր կրթական և մասնագիտական պահանջներ: Միջազգային շուկաներում աշխատանքային ռեսուրսների մրցունակությունը պայմանավորված է աշխատանքի որակով, աշխատողների կրթական մակարդակով, ինքնուրույն որոշումներ ընդունելու կարողությամբ, կազմակերպչական ունակություններով և նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու հմտություններով: Տնտեսական նոր կարգավիճակ և յուրահատուկ գործառույթ է ձեռք բերում ինտելեկտուալ կապիտալը, ուստի այս պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում նրա վերարտադրության հիմնահարցը, որի աղբյուրը կրթությունն ու գիտությունն է: Անհրաժեշտ է առանձնացնել կրթական համակարգի դերը, քանզի այն պետք է ապահովի ոչ միայն գիտատեխնիկական առաջընթացը, այլև պատրաստի նորարարական, ստեղծագործ աշխատանքի ունակ, իրազեկ, կրթված հասարակություն:

Տնտեսության զարգացումն անհնար է պատկերացնել առանց գիտության և կրթության փոխազդեցության և փոխառնչելի առաջընթացի: Այս գործընթացն ունի երեք հիմնական ոլորտ՝ տնտեսություն, կրթություն, հոգևոր արժեքներ: Այսպիսով, գիտությունն ազդում է տնտեսության վրա ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի՝ կրթության համակարգի և հոգևոր արժեքների միջոցով:

**Հասարակության և գիտության զարգացման
փոխկապվածության պատկերը հետևյալն է**



Այս շարակարգում ինտելեկտուալ կապիտալի վերարտադրության յուրահատուկ գործառույթ է վերապահվում կրթական համակարգին: Ուստի և արդի փուլում խիստ կարևոր է ինտելեկտուալ կապիտալի արդյունավետ վերարտադրությունը՝ որպես տնտեսական առաջընթացի գրավական: Միաժամանակ անհրաժեշտ է կրթական համակարգի գործունեության համապատասխանություն տնտեսական միջավայրի պահանջներին: Դիտարկելով կրթության դերը հասարակության զարգացման գործում՝ կարելի է առանձնացնել կրթական հայեցակարգերի ազդեցության բնույթը մասնագիտական կրթության ադապտացիոն հնարավորությունների, տնտեսական միջավայրի տարբեր մակարդակի

մասնագետների հազնեցվածության աստիճանի վրա և այլն: Այս առումով ուշադրության են արժանի եվրոպական և ամերիկյան կրթական համակարգերը, որտեղ այդ հայեցակարգերի ազդեցությունը ակնհայտ է և նշանակալի:

Արևմտյան կրթական հայեցակարգերի հիմնական դրույթներն են.

• վաղ տարիքում անհատների տարբերակում՝ կախված բնածին ունակություններից,

• պետական մեծ ներդրումային ծրագրեր՝ ինտելեկտուալ սերտիֆիկացիոն խմբի ներկայացուցիչներին բարձրորակ կրթություն տալու նպատակով,

• տնտեսության պահանջներից բխող մասնագիտական կրթություն՝ սկսած դպրոցական տարիքից,

• ընդհանուր և հատուկ կրթության ժամկետային տարբերակում,

• բարձր կարգի կրթական ծառայությունների մատուցման տարբերակում՝ հիմնված ինչպես վճարումնակության, այնպես էլ անհատական ունակությունների գնահատման վրա,

• «Էլիտար բարիքի»՝ բարձրագույն կրթության շնորհալի սպառողներին պետական և ոչ պետական բարձր պաշտոններ զբաղեցնելու մեծ հնարավորություններ:

Հայաստանի համար ուշագրավ է Վապոնիայի փորձը, քանզի ակնհայտ է ելակետային պայմանների նմանությունը: Երկու երկրներում էլ, համեմատած զարգացած երկրների հետ, ժամանակակից կրթական համակարգերը ձևավորվել են բավականին ուշ: Երկուսն էլ անցել են կառավարման տոտալիտար փուլը, երբ կրթական համակարգն ուղղված էր զաղափարախոսական գործառույթների իրականացմանը: Երկու երկրներում էլ խիստ արտահայտված են կառավարման ուղղահայաց կառույցները: Մեծ նշանակություն ունի նաև էթնիկական համաստեղությունը: Վապոնական տնտեսական հրաշքի քննարկման ժամանակ հաճախ անտեսվում է դրա կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ կրթական համակարգը: Իրականում Վապոնիայի կրթական համակարգի հաջող ինստիտուցիոնալ և տնտեսական կառուցվածքը համադրվել է ամերիկյան մրցակցության, ճապոնական կոռպորացիան և համախմբվածության հետ՝ դառնալով արագընթաց տնտեսական աճի և հասարակական բարեկեցության հիմնական գործոններից մեկը: Վապոնական կրթական համակարգն ուսումնասիրողներին զարնացնում է այն, որ երեխաներն ուսումնական տարվա ընթացքում դպրոցում անցկացնում են 240 օր, այսինքն՝ 33%-ով ավելի, քան ամերիկացի դպրոցականները, և 20%-ով ավելի, քան անգլիացի դպրոցականները: Ուսումնական շաբաթի տևողությունը 36 ժամ է:՝ Ոչ պետական հատվածի դերն ուսումնառության նախնական փուլերում (տարրական և թերի միջնակարգ) Վապոնիայի կրթական համակարգում մեծ չէ: Այդ ուսումնական հաստատություններում սովորողների 99%-ը հաճախում է պետական կրթօջախներ: Սակայն հաջող փուլերում ոչ պետական ուսումնական հաստատությունների դերն արմատապես փոխվում է: 18 տարեկանների 90%-ը լիարժեք միջնակարգ դպրոցի շրջանավարտներ են: Վապոնիայի դպրոցականների 30%-ը նախընտրում է համալսարանի ընդունելության քննություններին նախապատրաստվելիս օգտվել ոչ պետական հատվածի ծառայություններից: Վապոնիայում յուրաքանչյուր միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություն որոշակի վարկանիշ ունի, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է զանգվածային լրատվական միջոցներով: Այնպես որ, բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու դժվարությունը պայմանավորված է նաև տվյալ հաստատության վարկանիշով: Զննական «դժոխքի» պատճառներն են՝

• Ինչպես մասնավոր, այնպես էլ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ոչ մեծ քանակությունը: Հատկապես քիչ է պետական համալսարանների քանակը, որը պետական քաղաքականության արդյունք է:

¹ St'u E. F. Vogel, Education and Sociology:an encyclopedia, New York: RoutledgeFalmer, 2002, էջ 49:

² St'u W. G. James, Encyclopedia of education/New York, 2003, էջ 55:

• Հասարակությունում բարձրագույն կրթության առանձնահատուկ կարգավիճակը և որպես դրա հետևանք՝ տվյալ ծառայության նկատմամբ մեծ պահանջարկը:

• Ըստ մասնագետների հաշվարկների՝ բարձրագույն կրթության ոլորտում ներդրման տնտեսական հատույցը պետական հատվածում տարեկան 9% է (Ճապոնիայում նույնիսկ պետական բուհում կրթություն ստանալու համար անհրաժեշտ է վճարել նաև բաց թողած հնարավորությունների արժեքը): Այդ նույն ցուցանիշը մասնավոր հատվածում 7.5% է տնտեսագիտական մասնագիտություն և 7%՝ ճարտարագետի մասնագիտություն ստանալու դեպքում³:

Երեխաների ուսման վրա կատարված ներդրումը շահութաբեր է, և շատ ծնողներ անցնում են քննական «դժոխքի» միջով նաև այդ նպատակով: Ընդհանրական բարձրագույն կրթության համակարգի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ պետական համալսարանների վարկն էապես բարձր է մասնավոր հատվածի բուհերի համեմատությամբ: Այդ հանգամանքը բացատրվում է համակարգի զարգացման պատմական ընթացքով: Պետական համալսարանները սերտ կապերի մեջ են ճապոնական խոշորագույն կորպորացիաների հետ, որը և նպաստում է շրջանավարտների՝ աշխատանք ստանալու խնդրի լուծմանը: Հաջորդ հանգամանքն այն է, որ պետական բարձրագույն կրթությունը մեծ ֆինանսավորում է ստանում: Մասնավոր համալսարանում մեկ ուսանողական տեղի արժեքը կազմում է պետական համալսարանի նույն ցուցանիշի միայն 30%-ը⁴: Մինևույն ժամանակ պետական համալսարանի ուսանողի ծախսերը 2,5 անգամ զիջում են մասնավոր համալսարանի համապատասխան ծախսերին: Ներկայումս պետական և մասնավոր համալսարանների ուսման վարձի տարբերությունը կրճատվելու միտում է դրսևորում:

Հայաստանի կրթական համակարգն առավել քան 1600 տարվա պատմություն ունի: Այն հիմնականում զարգացել է եկեղեցու հովանու ներքո: Եվ միայն 1920 թ., անջատվելով եկեղեցուց, ինքնուրույն զարգացման հնարավորություն ստացավ: Հիմնվեցին նոր կրթօջախներ, լուրջ զարգացում ապրեցին գիտությունը և մշակույթը: 1980-ական թվականներին միջնակարգ կրթություն ստացածների թիվը կազմում էր բնակչության 98-99%-ը, իսկ բարձրագույն կրթություն ուներ բնակչության 21-25%-ը, ինչը բարձր ցուցանիշ էր ողջ աշխարհում:

1991 թ., երբ Հայաստանն անկախություն ստացավ, կրթական համակարգը ենթարկվեց լուրջ փոփոխությունների: Տնտեսական անկումը բացասական մեծ ազդեցություն թողեց այդ ոլորտի զարգացման վրա: Կրճատվեց կրթության ֆինանսավորումը, անկում ապրեցին գիտությունն ու մշակույթը: Չրկվելով պետական լայնածավալ ֆինանսավորումից՝ կրթօջախները ստիպված էին համարել բյուջեն՝ ներգրավելով մասնավոր միջոցներ: Ներմուծվեց և աստիճանաբար ընդլայնվեց վճարովի կրթական համակարգը: Այն ընդգրկեց հիմնականում բարձրագույն կրթության ոլորտը: Միջնակարգ կրթությունը մինչև օրս անվճար է, թեպետ գործում են մի շարք մասնավոր միջնակարգ դպրոցներ: Կրթությամբ հատկացվող պետական ծախսերը կրճատվել են՝ ՀՆԱ-ի 7-9%-ից 80-ական թվականներին մինչև 2-3% 90-ական թվականներին⁵: 2003 թ. գիտության և կրթության ոլորտում կատարված պետական ծախսումները կազմել են ՀՆԱ-ի 2.1%: Ընդ որում՝ հետազոտությունների և գիտության զարգացմանն ուղղված համապատասխան ցուցանիշը կազմել է 0.25%⁶: 2000 թ. դրությամբ համապատասխան ցուցանիշները Ճապոնիայում 6,6% և 3% էին⁷: Տնային տնտեսությունների մասնավոր ծախսերը կրթության ոլորտում մոտ երկու անգամ գերազանցում են պետական ծախսումները: Միաժամանակ էական է այս

³ Տե՛ս նույն տեղը, էջ 77:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 99:

⁵ Տե՛ս «Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում», ՄԱԿ-ի զեկույց, 2002:

⁶ Տե՛ս www.armstat.am:

⁷ Տե՛ս «Мир на рубеже тысячелетий. Прогноз развития мировой экономики до 2015 г.», Институт мировой экономики и международных отношений АН РФ, М., 2001, էջ 25:

ծախսումների անհավասարությունը հասարակությունում եկամտի բաշխման տեսանկյունից: Հասարակության բեռնացումն իր ազդեցությունն ունեցավ նաև կրթության ոլորտի վրա: Տնային տնտեսություններն ամենահարուստ քվանթիլում ծախսում են երեք անգամ ավելի յուրաքանչյուր երեխայի համար, քան քնային տնտեսություններն ամենաաղքատ քվանթիլում: Եվ քանզի պետական ֆինանսավորումն ընդգրկում է բարձրագույն կրթության միայն 20%-ը⁸, ապա համապատասխան հաստատություններում կրթություն ստանալը պահանջում է լուրջ մասնավոր ներդրումներ: 2002 թ. ԲՈՒՀ-երում սովորողների 65.5%-ը⁹ ոչ աղքատ ընտանիքների երեխաներ էին: Եվ նույնիսկ պետական ֆինանսավորման պայմաններում տնային տնտեսությունները ստիպված են հոգալ տրամապորտի, սննդի, գրենական պիտույքների և անհրաժեշտ գրականության հոգսերը, ինչը հաճախ գերազանցում է աղքատ տնտեսությունների հնարավորությունները:

Կրթական համակարգի արդյունավետության չափանիշներից է նաև այն, թե որքանով է վերջինս օգնում երիտասարդներին հասարակության մեջ համապատասխան տեղ գրավելու համար, որքան կիրառական գիտելիքներ և հմտություններ ստանալու հնարավորություն է ընձեռում կրթական համակարգը: Հաճախ ապահովված առաջարկը չի համապատասխանում շուկայի պահանջներին, և նույնիսկ բարձրագույն կրթություն ստացած անհատները համալրում են գործազուրկների շարքերը: 2003 թվականին, ըստ պաշտոնական տվյալների, գործազուրկների 13%-ը ուներ բարձրագույն կրթություն, իսկ 81.6%-ը՝ միջնակարգ¹⁰:

Լուրջ խնդիր է նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների թվի աննախադեպ կրճատումը: Եթե 2001 թ. դեռ գրանցված էին 56 մանօրինակ հիմնարկներ, ապա 2003 թ. պաշտոնական վիճակագրությունը չի նշում և ոչ մի տվյալ¹¹: Իսկ նման կրթօջախները կարևոր դեր ունեն յուրաքանչյուր հասարակության տնտեսական զարգացման գործընթացում:

Այս և մի շարք այլ խնդիրների լուծումն առաջնահերթ է ՀՀ կրթական համակարգի համար: Իրականացվում են մի շարք բարեփոխումներ ինչպես միջնակարգ, այնպես էլ բարձրագույն կրթության ոլորտում: Հայաստանի բարձրագույն կրթության շրջտում երկաստիճան (բակալավր-մագիստրոս) համակարգը սկսեց ներկայացվել դեռևս 1997 թվականից: Ներկայումս 18 պետական բուհերում կրթություն է ստանում 57 000 ուսանող, որոնցից 1900-ը՝ մագիստրատուրայում և 1300-ը՝ ասպիրանտուրայում: Բուհն ավարտողների միայն 12%-ն է շարունակում ուսումը մագիստրատուրայում և ասպիրանտուրայում: Մասնավոր 72 համալսարաններում կրթություն է ստանում 18000¹² երիտասարդ:

ՀՀ կառավարության քաղաքականության կարևորագույն հիմնահարցերից է բարձրագույն կրթություն ստանալու մատչելիության ապահովումը ֆինանսական և վարկային համակարգի ճկունության և նպատակաուղղված հասարակական ռազմավարության մշակման միջոցով: Միաժամանակ աշխատանքներ են տարվում ստանդարտների մշակման¹³, զնահատման համակարգի բարելավման, միջազգային ինտեգրման, հետազոտությունների խրախուսման, տնտեսության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Ներկայումս անձի՝ որպես ինտելեկտուալ կապիտալի կրողի անհատական առաջընթացն անհնար է պատկերացնել առանց մասնագիտական նոր ձեռքբերումների: Իսկ դա անքակտելիորեն կապված է վերապատրաստման համակարգի ձևավորման և զարգացման

⁸ Տե՛ս «Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում», ԱԶ ազգային զեկույց, 2001:

⁹ Տե՛ս www.armstat.am:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

¹² Տե՛ս www.bologna-bergen2005.no:

¹³ Օրինակ՝ զարգացած երկրների (տնտեսագիտական) ստանդարտների համակարգը, տե՛ս «National Contents Standards In Economics», NY – 2000:

հետ: Ինտեգրվելով բոլոնյան գործընթացին՝ ՀՀ կառավարությունն առաջնային խնդիրների շարքում սահմանել է վերոհիշյալ համակարգի խթանումը: Այն հնարավորություն կտա ապահովել անհատի և հասարակության շահերի ներդաշնակությունը: Միաժամանակ կնպաստի անհատական ինտելեկտուալ կապիտալի աճին անձի ողջ աշխատանքային գործունեության ընթացքում:

Կրթությունը և գիտությունը Հայաստանի կայուն առաջընթացի հիմքն են: Հասարակության անդամների իրազեկությունը, մասնագիտական քարձր որակավորումը, ստեղծագործ աշխատանքի կարողությունը և անհատական առաջընթացի ձգտումը տնտեսության զարգացման գրավականներն են:

А. Н. ГАЛСТЯН - Система образования как основной фактор воспроизводства интеллектуального капитала. - Интеллектуальный капитал рассматривается современной экономической наукой как важный фактор развития. В связи с этим чрезвычайно важное значение приобретает система образования как источник воспроизводства интеллектуального капитала. В статье изложены некоторые положения основных европейских и американских образовательных концепций. Приведен пример системы образования в Японии. Рассматривается система образования РА.